

Տեղեկատվություն

ՀՀ Լոռու մարզի և այլ երկրների վարչատարածքային միավորների
միջև համագործակցության վերաբերյալ 2021թ. նոյեմբերի 11-ի
դրությամբ

Թիվ	Համագործակցություն	Ընթացիկ վիճակ	Տարեթիվ
1	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ուկրաինայի Հանրապետության Խարկովի մարզի միջև մտադրությունների արձանագրություն	2009թ-ի հոկտեմբերի 14-ին Ուկրաինայի Հանրապետության Խարկովի մարզի և Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի հետ կնքվել է գիտատեխնիկական և մշակութային համագործակցության «Մտադրությունների արձանագրություն»	2009թ. հոկտեմբերի 14
2	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ֆրանսիայի Հանրապետության ՊԱԿԱ ռեգիոնի միջև 2008 թ-ի շրջանակային պայմանագիր	2008թ-ի հունիսի 18-ին «Շրջանակային պայմանագիր» է կնքվել ՀՀ Լոռու մարզպետարանի և ՖՀ ՊԱԿԱ ռեգիոնի միջև	2008թ. հունիսի 18
3	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի միջև բարեկամական կապերի վերաբերյալ հուշագիր, Հայաստանի Հանրապետության Լոռու	2011թ նոյեմբերի 14-ին ստորագրվել է Հուշագիր Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի միջև բարեկամական կապերի վերաբերյալ և Արձանագրություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին, ապա Համագործակցության	2011թ. նոյեմբերի 14

	մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին Արձանագրություն	վերաբերյալ մտադրությունների արձանագրություն՝ ՉԺՀ Շանսի նահանգի Յունչեն և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքների քաղաքապետերի միջև	
4	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզի միջև համաձայնագիր	Մարզպետի գլխավորությամբ Լոռու մարզի պատվիրակությունը 2012թ. հունիսի 16-ին այցելել է Բելառուսի Վիտեբսկի մարզ, որտեղ ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Համաձայնագիրը սահմանում է երկու շրջանների համագործակցության հիմնական ուղղությունները ինչպես հումանիտար, այնպես էլ տնտեսական ոլորտներում:	2012 թ. հունիսի 16
5	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ֆրանսիայի Հանրապետության ՊԱԿԱ ռեգիոնի միջև 2012-2014 թվականների համագործակցության համաձայնագիր	Ֆրանսիայի Հանրապետության ՊԱԿԱ ռեգիոնի ղեկավարների միջև կնքված երկկողմ շրջանակային պայմանագրի շրջանակներում 2012թ. դեկտեմբերի 10-ին ստորագրվել է ՀՀ Լոռու մարզի ԵԼ ՖՀ ՊԱԿԱ ռեգիոնի միջև «2012-2014 թվականների համագործակցության համաձայնագիր», որը նախատեսում է ՀՀ Լոռու մարզում ներդրումային ծրագրերի իրականացում Ֆրանկոֆոնիայի զարգացման, զբոսաշրջության և անասնաբուժության բնագավառներում:	2012թ. դեկտեմբերի 10
6	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Վրաստանի Աջարիայի հնքնավար Հանրապետության միջև համագործակցության	2013թ. սեպտեմբերի 9-ից 10-ը տեղի է ունեցել Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորած պատվիրակության այցը Վրաստանի Աջարիայի հնքնավար Հանրապետություն: Այցի նպատակն էր Լոռու և Աջարիայի միջև բարեկամության կապերի ամրապնդումը: Այցի ընթացքում ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր ՀՀ	2013թ. սեպտեմբերի 10

	մասին փոխըմբռնման հուշագիր	Լոռու մարզի և Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության միջև համագործակցության մասին:	
7	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության միջև համագործակցության մասին պայմանագիր	Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության պատվիրակության Լոռու մարզ կատարած այցի ընթացքում ստորագրվել է նշված պայմանագիրը:	2014թ. հոկտեմբերի 5
8	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Շվեդիայի Թագավորության Ուպսալայի նահանգի իշխանությունների միջև համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր	Հուշագիրը ստորագրվել է ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորած պատվիրակության՝ 2016թ. մայիսի 31-ից հունիսի 1-ը Շվեդիայի Ուպսալա նահանգ կատարած այցի ընթացքում: Պատվիրակության կազմում էին Ալավերդիի քաղաքապետ Կարեն Փարեմուլյանը, Սպիտակի քաղաքապետ Գագիկ Սահակյանը և Լոռու մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը:	2016թ. հունիսի 1
9	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ռումինայի Հանրապետության Հարգիտա նահանգի մտադրությունների արձանագրություն	Ռումինիայի Հարգիտա նահանգի նահանգային խորհրդի նախագահի և Գեորգեն քաղաքի քաղաքապետի հրավերով 2017թ-ի սեպտեմբերի 8-12-ը հնգօրյա պաշտոնական այցով Հարգիտա նահանգում էր Լոռու մարզի պատվիրակությունը մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ: Լոռու մարզի և Հարգիտա նահանգի կողմից երկկողմ բազմակողմանի համագործակցության վերաբերյալ մտադրությունների արձանագրություն է ստորագրվել Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի և Հարգիտա նահանգի նախագահ Բորբոյի Չաբայի կողմից: Այն մասնավորապես առնչվում է կողմերի միջև տնտեսական համագործակցությանը:	2017թ. սեպտեմբերի 11
10	Հայաստանի Հանրապետության Լոռու	Նոյեմբերի 9-11-ը Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը աշխատանքային այցով եղել է Իրանի Իսլամական	2019թ. նոյեմբերի 10

	մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Մազանդարան նահանգի միջև փոխըմբռնման հուշագիր	Հանրապետության Մազանդարան նահանգում: Հանդիպման շրջանակներում կողմերը ստորագրել են համագործակցության հուշագիր՝ պայմանավորվածություն ձեռք բերելով գործակցելու մի շարք ոլորտներում, այդ թվում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, զբոսաշրջության, մշակույթի, սպորտի և այլն:	
11	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Չինաստանի ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի միջև համագործակցության հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր	Համաձայնագիրը ստորագրվել է ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղուկասյանի գլխավորած պատվիրակության՝ 2019թ-ի ապրիլին ՉՀ կատարած այցի ընթացքում: ՀՀ Լոռու մարզի և Չինաստանի ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի միջև համագործակցության հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիրը նպատակ ունի հիմնելու բարեկամական հարաբերություններ ՀՀ և ՉՀ ժողովուրդների միջև:	2019թ. ապրիլի 25
12	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ռումինիայի Հանրապետության Հարգիտա նահանգի միջև համագործակցության համաձայնագիր	2019թ-ի սեպտեմբերի 27-ից 30-ը պաշտոնական այցով Լոռու մարզում է գտնվել Ռումինիայի Հանրապետության Հարգիտա մարզի պատվիրակությունը, որի ընթացքում ստորագրվել է համագործակցության համաձայնագիր՝ ցանկանալով նպաստել Կողմերի միջև բարեկամական հարաբերությունների և երկկողմ համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը:	2019թ. սեպտեմբերի 28
13	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս- Ալպ-դ'Ազուրի միջև համագործակցության պայմանագիր	ՀՀ Լոռու մարզի և ՖՀ Պրովանս-Ալպ-դ'Ազուրի միջև համագործակցության պայմանագիր է ստորագրվել 2019թ-ի նոյեմբերի 25-ին՝ նպատակ ունենալով իրականացնելու ապակենտրոնացված համագործակցություն տարբեր ոլորտներում:	2019թ. նոյեմբերի 25